

**Մեկ ամիս է՝ ադրբեջանցի ասկյարները Ներքին Հանդի մերձակա տարածքում են, որ ինքնիշխան Հայաստանի մաս է կազմում: Մեկ ամիս է, բայց արդեն, որքան էլ տարօրինակ է, հաշտվել ենք կատարված այդ հանցագործության հետ: Հաշտվել ենք այնպիսի խոնարհությամբ, ինչպես եղավ դրանից առաջ, երբ ադրբեջանցի օկուպանտները զավթեցին Խոզնավարի ու Տեղի դաշտամասերը, Սև լճի արևելյան հատվածը, Գլուխ Ձագեձորը լեռը, Գորիս - Կապան և Կապան – ճակատեն մայրուղիների կարևոր հանգույցները, Մեծ Իշխանասարի հարավ – արևմտյան ստորոտը, հայոց Շուռնուխի արևելյան թաղամասը:**

Երեբջարթի  
12 ապրիլի 2022թ.  
№ 7 (573)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468  
2 1 0 0 7 >  
9 771829 346006

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

**Որո՞նք են լինելու վաղվա Հայաստանի սահմանները:**  
**- Անոնք, որ պիտի գծեն հայ զինվորի արիությունն ու հայրենասիրությունը:**  
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ



## Հայոց պետականության լինելության և հայ ժողովրդի անվտանգության բանալին գտնվում է Արցախում

Չ 2

Դադիվանք, Արցախի Նահանգի Խաչեն գավառի կրոնական ու մշակութային կենտրոնը (հիմնադրվել է մ.թ. 1-ին դարում)

©Vardan Petrosyan

### Ցանկացած ներխուժում Հայաստանի տարածք՝ կարժանանա Իրանի ՉՈՒ պատասխանին

Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերի ելիտար զորամիավորումը՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ), պատասխանել է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ինքնիշխանության դեմ ուղղված հերթական ադրբեջանական հայտարարությանը, որը հրապարակվել է ադրբեջանական «Յենի Մուսավաթ» կուսակցության համանուն պաշտոնաթերթում: Այդ մասին հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով ԻՀՊԿ-ի «Տեղեգրամ ալիք»-ի հաղորդագրությունը:

«Ցանկացած ռազմական ներխուժում Հայաստանի տարածք՝ կարժանանա Իրանի

զինված ուժերի պատասխանին: Իրանի Իսլամական Հանրապետությունը բազմիցս հայտարարել է, որ թույլ չի տա հարևան պետությունների սահմանների փոփոխություն», – ասված է Կորպուսի հայտարարության մեջ:

Ավելի վաղ «Յենի Մուսավաթ» պարբերականում Հայաստանի Հանրապետությանը տարածքային հավակնություններ ներկայացնող հերթական ադրբեջանական անհեթեթություն էր հրապարակվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի համատեքստում, որում նշվում էր, թե «քանի որ Հայաստանը մեր պատմական հողերից է՝ մենք իրավունք ունենք վերադարձնել այն մեր վերահսկողության տակ»:

27.03.2022



### Արցախը դիմել է ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինին

Արցախի Հանրապետության Նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ մարտի 25-ին տեղի ունեցած Անվտանգության խորհրդի նիստում որոշում է կայացվել պաշտոնական գրությամբ դիմել Ռուսաստանի Հանրապետության Նախագահ, ՌԴ Անվտանգության խորհրդի Նախագահ Վլադիմիր Պուտինին՝ ելնելով Արցախի Հանրապետությունում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակից և 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթներից:

Նամակում, նախ, անդրադարձ է կատարվել, որ Արցախում ռուսական խաղաղապահների տեղակայման օրվանից սկսած, ընդհանուր առմամբ, զորակազմը գործել է բարձր արդյունավետությամբ և կատարել իր առջև դրված խնդիրները: Ադրբեջանական ռազմաքաղաքական իշխանության կողմից հարուցված բազմաթիվ խնդիրներ լուծվել են զորակազմի անմիջական, արագ և գործուն մասնակցությամբ, ինչի շնորհիվ Արցախում ձեռնամուխ են եղել պատերազմի պատճառած հետևանքների հաղթահարմանը: Սակայն 2022 թվականի մարտի 8-ից սկսած ադրբեջանական կողմը մեծ ինտենսիվությամբ իրականացնում է հումանիտար, հոգեբանական, ապա նաև ռազմական ագրեսիա:

Մանրամասնորեն շարադրելով մարտի սկզբից մեկնարկած ադրբեջանական ագրեսիվ գործողություններն Արցախի բնակչության հանդեպ, ներառյալ՝ Փառուխի ու հարակից տարածքների հանդեպ ռազմական ագրեսիան՝ նամակի վերջում ներկայացվում են մի շարք առաջարկներ:

«Արցախի Հանրապետության Անվտանգության խորհուրդը որոշում է կայացրել դիմել Ձեզ՝ խնդրելով ձեռնարկել միջոցներ՝ Ադրբեջանի ղեկավարության կողմից պահպանելու 2020 թվականի նոյեմբերի 9-ին ընդունված Հայտարարության դրույթները: Արցախի ժողովրդին անհրաժեշտ են անվտանգության պայմաններ, որպեսզի բնակվենք մեր պատմական հողում ու զբաղվենք պատերազմի վերջերի բուժմամբ: Բայց, ինչպես ներկայացվեց, Ադրբեջանի Նախահարձակ գործողությունները հնարավոր չեն դարձնում զբաղվել խաղաղ առօրյայով, ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ են անվտանգության ապահովման լրացուցիչ միջոցառումներ:

Ըստ այդմ, գտնում ենք, որ հայտարարության դրույթներով նախատեսված խաղաղապահ զորակազմի անձնակազմի և այն սպասարկող տեխնիկական միջոցների գործող բանակն անբավարար է Արցախում խաղաղապահ առաքելության լիարժեք կատարման համար՝ հաշվի առնելով Ադրբեջանի ռազմական նկրտումների աճողական և ընդլայնվող բնույթը: Խնդրում ենք Ձեզ՝ ի լրումն ադրբեջանական ընթացիկ ագրեսիայի զսպման ու ադրբեջանական զինված ուժերի հետքաշման իրենց ելման դիրքեր՝ վերանայել ՌԴ խաղաղապահ զորակազմի ներկա թվաքանակն ու սպասարկող միջոցների քանակը և համապատասխանաբար ավելացնել ինչպես զինծառայողների, այնպես էլ զինտեխնիկայի միջոցները»:

26.03.2022

# Հայոց պետականության լինելիության և հայ ժողովրդի անվտանգության բանալին գտնվում է Արցախում

Սկիզբը՝ էջ 1

**Ա**զգային ժողովն ընդունել է հայտարարություն, որով կոչ է անում համահայկական մակարդակով ձևավորել համազգային համախմբում՝ Արցախի ճակատագրին վերաբերող հարցերի շուրջ:

«Արցախի Հանրապետության Ազգային ժողովը՝ որպես Արցախի ժողովրդի առաջնային մանդատ ունեցող բարձրագույն ներկայացուցչական մարմին, արտահայտելով հասարակական-քաղաքական լայն շրջանակների կարծիքն ու դիրքորոշումը, կոչ է անում համահայկական մակարդակով ձևավորել համազգային համախմբում՝ Արցախի ճակատագրին վերաբերող հարցերի շուրջ:

Համոզված ենք, որ Հայաստանի և Արցախի հանրապետությունները, ունենալով Սփյուռքի հայկական համայնքների լիարժեք աջակցությունը, մեկ բռունցք դառնալով, միասնաբար կարող են դիմագրավել տարածաշրջանային մարտահրավերները՝ պաշտպանելով մեր ազգային շահերը:

Աշխարհաքաղաքական իրողությունների այս բարդ ժամանակահատվածում, երբ Ադրբեյջանը, փորձելով տապալել ռուսական խաղաղապահ առաքելությունը, շարունակում է հայկական բնակավայրերի պարբերաբար զնդակոծումը, պայթեցնում է գազամուղը, փորձում ահաբեկել հայրենի հողում բնակվող խաղաղ բնակիչներին, շարունակում գավթել նորանոր տարածքներ, Արցախի Հանրապետության Ազգային ժողովը վերահաստատում է Արցախի ժողովրդի կամքն ու վճռակալությունը 1988 թվականին սկիզբ առած իր պատմական հայրենիքում ազատ ապրելու իրավունքից բխող Ազգային ազատագրական պայքարի տեսլականը:

1991 թվականի սեպտեմբերի 2-ի հռչակագրով, այնուհետև համաժողովրդական հանրաքվեի միջոցով Արցախի ժողովուրդը միջազգային բոլոր նորմերին համապատասխան ձևավորեց Լեռնային Ղարաբաղի (Արցախ) Հանրապետությունը: 30 տարիների ընթացքում մենք անցել ենք հաղթանակների և անհաջողությունների միջով: 2020թ. սեպտեմբերի 27-ին մեզ պարտադրված ու 44 օր տևած պատերազմի հետևանքով մենք ունեցանք մարդկային և տարածքային կորուստներ: Սակայն ոչինչ և ոչ ոք չի կարող մեզ գրել ինքնորոշման և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքից: Խոսարիվելով մեր գոյապայքարի բոլոր նահատակների հիշատակի առջև՝ մեր հավատարմությունն ու պատրաստակամությունն ենք արձանագրում հետևողական լինել Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման և տարածքային ամբողջականության վերականգման գործընթացներին:

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո հիմնովին փոխվել է մեր անվտանգային միջավայրը, տարածաշրջանում հաստատված փոփոխությունը պահպանվում է Արցախի Պաշտպանության բանակի և ռուսական խաղաղապահ ուժերի շնքերով: Ինչպես ցույց են տվել վերջին մեկուկես տարիների իրադարձությունները, մեր թշնամիները այսօր էլ շարունակում են Արցախը հայաթափելու իրենց ծրագիրը: Ներկա պայմաններում ՀՀ կողմից Արցախի անվտանգության երաշխավոր լինելու պարտականության ամրագրումը և համահայկական միասնության մթնոլորտի ձևավորումը միայն կարող են բավարար պայմաններ ստեղծել հայ ժողովրդի ապագան հայրենի հողում երաշխավորելու համար:

Հարգելի՛ հայրենակիցներ  
Հայոց պետականության լինելիության և հայ ժողովրդի անվտանգության բանալին գտնվում է Արցախում», – ասված է հայտարարության մեջ:

ARTSAKHPRESS.AM, 5 ԱՊՐԻԼԻ 2022 Թ.



# Նիկոլ Փաշինյանը Բրյուսելում ԵՄ - Ադրբեյջան - Հայաստան ձևաչափով ապրիլի 6-ի եռակողմ հանդիպման մասին

Հանդիպման արդյունքներով երկու հարցի վերաբերյալ կայացվել է որոշում: Առաջինը՝ երկու երկրների արտաքին գործերի նախարարներին հանձնարարվել է սկսել ապագա խաղաղության պայմանագրի նախատրատայտական աշխատանքները և այս ուղղությամբ ձեռնարկել բանակցություններ և շփումներ: Ի՛նչ է սա նշանակում: Սա նշանակում է, որ խաղաղության պայմանագրի վերաբերյալ Հայաստանի և Ադրբեյջանի ներկայացրած սկզբունքները և հարցերը պետք է ի մի բերվեն և բանակցությունների արդյունքներով հասցեագրվեն:

**Կ**առավարության նախորդ նիստում ունեցած ելույթում ես բարձրաձայնել եմ այս առնչությամբ մեր ունեցած նկատառումները, և տեղյակ եմ, որ ի պատասխան Ադրբեյջանի առաջարկների՝ մենք ընդգծել ենք, որ դրանցում մեզ համար անընդունելի ոչինչ չկա, սակայն դրանք չեն ամբողջացնում խաղաղության օրակարգի հարցերը, և մեզ համար սկզբունքային նշանակություն ունեն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության երաշխիքները, նրանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի ճշգրտումը: Այս հարցերն ընդգրկված են խաղաղության օրակարգի վերաբերյալ մեր պատասխաններում և պիտի դառնան բանակցությունների առարկա: Իհարկե, ինչպես նախկինում, մենք այս գործընթացում էական ենք համարում ԵԱՀԿ Մինսկի խմբի համա-նախագահության ներգրավվածությունը և պիտի շարունակենք աշխատել այդ ուղղությամբ:

Բնականաբար, բնարկում եղավ Լեռնային Ղարաբաղում անվտանգային միջավայրի վատթարացման՝ մասնավորապես, Փառուի ի ղեկավարի շուրջ, բայց այդ բնարկումները չհանգեցրին իրավիճակի միասնական գնահատականի: Նաև պիտի ասեմ, որ կոնկրետ այս թեմայի հետագա բնարկումը ինքս պատեմ չհամարեցի բրյուսելյան հարթակում, որովհետև խոսքը, այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ առաքելության պատասխանատվության գոտի ադրբեյջանական ստորաբաժանումների ներխուժման մասին է, և այս

հարցը ավելի շատ պիտի բնարկվի Ռուսաստանի Դաշնության գործընկերների մասնակցությամբ, ինչը մենք անում ենք և կանենք: Այս թեմայով մեր դիրքորոշումը հրապարակել եմ: Ըստ այդմ մենք ակնկալում ենք, որ Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահները միջոցներ կձեռնարկեն իրենց պատասխանատվության գոտուց ադրբեյջանական ստորաբաժանումների դուրսբերումն ապահովելու համար:

Նաև կարևոր ենք համարում իրադարձությունների զարգացման ընթացքում և իրադարձությունների զարգացման թատերաբեմում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորքերի գործունեության, գործողությունների համարժեքության, հնարավոր անգործության հետաքննության անցկացումը, ինչի մասին խոսել եմ նաև Ռուսաստանի

**Սահմանագծման և սահմանազատման աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն է հայտնել Ռուսաստանի Դաշնությունը: Եվրամիությունը նույնպես աջակցելու պատրաստակամություն է ցուցաբերում, և այս ուղղությամբ պիտի առաջ շարժվենք:**



Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ իմ հեռախոսազրույցների ընթացքում:

Վերադառնալով Բրյուսելի հանդիպմանը՝ տեղեկացնեմ, որ հաջորդ որոշումը, որ կայացվեց, մինչև ապրիլի վերջ Հայաստան-Ադրբեյջան սահմանների դեյմիտացիայի հարցերով երկկողմ հանձնաժողով ստեղծելու մասին էր: Այդ հանձնաժողովը կունենա կրկնակի մանդատ: Առաջինը՝ բուն դեյմիտացիայի, այսինքն՝ սահմանագծման աշխատանքներն են: Երկրորդը՝ սահմանի երկայնքով անվտանգության և կայունության ապահովումը: Այս թեմայով բնարկումները,

հիշում եմ, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ, տեղի են ունենում շուրջ մեկ տարի, և ի վերջո, այսպիսի կոմպրոմիսային որոշման հանգեցնիք:

Գիտեք, որ Հայաստանի Հանրապետության տարածքներ կան, որոնք գտնվում են Ադրբեյջանի վերահսկողության ներքո, կան Ադրբեյջանի տարածքներ, որոնք Հայաստանի վերահսկողության ներքո են, և այս հարցերը պիտի լուծվեն բանակցությունների արդյունքներով՝ բնականաբար, դե յուրե հիմնավորված արձանագրումների, իրավական նշանակություն ունեցող փաստերի հիման վրա:

Սահմանագծման և սահմանազատման աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն է հայտնել Ռուսաստանի Դաշնությունը: Եվրամիությունը նույնպես աջակցելու պատրաստակամություն է ցուցաբերում, և այս ուղղությամբ պիտի առաջ շարժվենք: Գիտեք, որ մեր դիրքորոշումն այն է, որ Հայաստանի և Ադրբեյջանի միջև դե յուրե սահման գոյություն ունի, և դա խորհրդային ժամանակներում գոյություն ունեցող սահմանագիծն է: Այս արձանագրումով սահմանագծման աշխատանքները պետք է սկսել և փորձել լուծումների հասնել՝ զուգահեռ միջոցներ ձեռնարկելով անվտանգության և կայունության ապահովման ուղղությամբ:

Բնարկման թեմաներից է եղել նաև տարածաշրջանային կոմունիկացիաների բացման հարցը, որի շուրջ արձանագրել ենք որոշակի տարրաբեկումներ և պայմանավորվել ենք շարունակել աշխատանքը լուծումներ գտնելու ուղղությամբ:

Բնարկման կարևոր թեմաներից էին հումանիտար հարցերը: Եվրամիության խորհրդի նախագահն ընդգծեց գերեվարված բոլոր անձանց ազատ արձակելու անհրաժեշտությունը: Բնարկվեցին նաև անհետ կորած համարվող անձանց ճակատագիրը պարզելու շուրջ համագործակցելու հնարավորությունը և հարցերը: Հիշեցնեմ, որ Արցախյան երկու պատերազմներից հետո մենք 985 գտնվելու վայրն անհայտ մարդ ունենք՝ 208 հոգի՝ 44-օրյա պատերազմից, 777 հոգի՝ Արցախյան առաջին պատերազմից: Պետք է շարունակենք նրանց ճակատագիրը պարզելուն ուղղված աշխատանքը:

”

# Ընդդիմադիր խմբակցությունների հանրահավաքի եզրափակիչ քանակ- հայտարարությունը (5 ապրիլի 2022 թ.)

**Ե**րևանի Ազատության հրապարակում տեղի ունեցավ Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների հրավիրած հանրահավաքը՝ «Պաշտպանելով Արցախը՝ պաշտպանենք Հայաստանը» կարգախոսով: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ի թղթակիցը՝ «Հայաստան» և «Պատիվ ունեն» խմբակցությունների կազմակերպած հանրահավաքի ընթացքում ներկայացվեց եզրափակիչ քանակ-հայտարարություն, որով ընդդիմությունը սահմանում է «ազգային օրակարգի հիմնարար սկզբունքները, կարմիր գծերը և համաժողովրդական պահանջի եռությունը»՝ որպես իր պայքարի ուղեկիշ:

Հայտարարությունը ընթերցեց «Պատիվ ունեն» խմբակցության անդամ Աննա Մկրտչյանը: «Հանուն Հայաստանի և Արցախի պաշտպանության հրավիրված հանրահավաքի մասնակիցներս, անկախ մեր քաղաքական և գաղափարաբանական տարբերություններից, վճռականորեն մերժում ենք թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից պարտադրվող օրակարգերը: Խաղաղության նախադրյալներ ստեղծելու համար Ադրբեջանը պետք է վերադարձնի հայ ռազմագերիներին, պատանդներին, այլ պահվող անձանց, ազատազրկման դատապարտվածներին, իր գործերը հեռացնի ինչպես Հայաստանի ինքնիշխան տարածքներից, այնպես էլ Արցախի տարածքում 2020 թ. նոյեմբերի 9-ի դրությամբ դիրքերին», – մեջբերեց Մկրտչյանը:

Հանրահավաքի մասնակիցները նաև հայտարարում են, որ առաջնորդվում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության և Արցախի Հանրապետության անվտանգության և ինքնորոշման իրավունքին վերաբերող մի շարք սկզբունքներով: Ընդդիմությունը պահանջում է առանց հերթիս հաստատել այն սկզբունքը, որ «Հայաստանի Հանրապետությունը Արցախի ժողովրդի անվտանգության և ինքնորոշման իրավունքի իրացման երաշխավորն է բոլոր բաղադրիչներով», ինչպես նաև բացառել Արցախի որևէ կարգավիճակ Ադրբեջանի Հանրապետության կազմում, բացառել առանց Հայաստանի հետ հուսա-



լի ցամաքային կապի՝ Արցախի անկախության վիճակը:

Նշվում է, որ պետք է նաև քայլեր ձեռնարկվեն 1994 թ. ԵԱՀԿ գագաթաժողովի որոշմամբ ամրագրված ձևաչափով և նպատակներով Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ բանակցային գործընթացի վերականգնման ուղղությամբ:

Հանրահավաքի մասնակիցները պահանջում են բացառել ՀՀ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հաշվին միջանցքների տրամադրումը, բացառել միջպետական պայմանագրի ստորագրում և սահմանազատման ու սահմանազանցման ցանկացած գործընթաց, Ադրբեջանի կողմից ուժի կիրառման և ուժի կիրառման սպառնալիքի պայմաններում, չստորագրել Ադրբեջանի հետ որևէ պայմանագիր, որը կխափանի Արցախի ինքնորոշման իրավունքի՝ առանց սահմանափակումների իրացումը:

Անդրադարձ է եղել նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղված բանակցություններին: «Հայաստան» և «Պատիվ ունեն» խմբակցություններն ու իրենց աջակիցները պահանջում են «Հայաստան-Թուրքիա հարաբերություններում բացառել որևէ համաձայնություն,

որը հարցականի տակ կդնի հայ ժողովրդի հայրենագրկման և ցեղասպանության իրողությունը, ինչպես նաև հայության հոգևոր-վնասակար ժառանգության կրողը լինելու իրավունքը»:

Հայտարարությունը պարզաբանում է, որ այս օրակարգի առաջադրումը չի նշանակում պատերազմ, այլ՝ հայ ժողովրդի կենսական շահերի հաշվառմամբ իրական, արդար և արժանապատիվ խաղաղություն հաստատելու պատրաստակամություն:

«Այս սկզբունքները բխում են հայ ժողովրդի կենսական շահերից, ուստի ցանկացած իշխանություն պարտավոր է առաջնորդվել այս օրակարգով և ապահովել դրա իրականացումը», – նշված է հայտարարության տեքստում:

**Հ. Գ. Ազգային ժողովի «Հայաստան» և «Պատիվ ունեն» խմբակցությունները ապրիլի 5-ին, ժամը 18:30-ին հանրահավաք էին հրավիրել Ազատության հրապարակում: «Հայաստան» և «Պատիվ ունեն» խմբակցությունները, դիմելով քաղաքական ու հասարակական կառույցներին, կոչ էին արել միասին ներկայացնել մի շարք պահանջներ՝ առանցքում ունենալով Արցախի հարցը:**

## Արցախի անկախության ճանաչման գործընթացը սկսելու պահանջ

**«5165»** շարժումը պահանջում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից սկսել Արցախի անկախության ճանաչման գործընթացը: Հայտարարությունում մասնավորապես ասվում է.

«Հայրենակիցներ, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ղեկավարությունը պատրաստակամություն է հայտնել Ադրբեջանի հետ ստորագրել խաղաղության համաձայնագիր՝ Արցախը թողնելով Ադրբեջանի կազմում:

Ժամանակն է սթափ գնահատելու եղելությունը. Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղությունն առանց Արցախի ինքնորոշման իրավունքի իրացման պատրանք է, որով փորձ է արվում բթացնել մեր հասարակության զգոնությունը: Ավելին, Ադրբեջանի բոլոր գործողություններն ու հայտարարությունները վկայում են ավելի մեծ պիտրոսկի մասին՝ Սյունիք, Գեղարքունիք, Երևան և այլն:

Արցախի փրկությունը նաև Հայաստանի փրկությունն է: Առանց ինքնորոշված Արցախի չի կարող լինել անվտանգ Հայաստան: Դեռևս բար Արցախի անկախության ճանաչումը հանուն Արցախի ժողովրդի փրկության և Հայաստանի ամուր անվտանգության ապահովման հրամայականն է:

«5165 շարժումը» պահանջում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից սկսել Արցախի անկախության ճանաչման գործընթացը և աշխատանքներ սկսել նրա միջազգային ճանաչման ուղղությամբ: Նման պահանջի համար հիմնավորումները բազմաթիվ են, սակայն ստորև բերենք մի քանիսը.

- Ադրբեջանը, խախտելով նոյեմբերի 9-ի



հայտարարությամբ ստանձնած պարտավորությունները, շարունակում է գավթել Արցախի՝ խաղաղապահ ուժերի վերահսկողության տակ գտնվող նորանոր տարածքներ,

- Շարունակում է իրականացնել հայաթափման, էթնիկ զտման և ցեղապանության քաղաքականություն՝ ռազմական առաջխաղացումներով, ահաբեկչությամբ, սադրանքներով ու հումանիտար ճգնաժամեր ստեղծելով,
- Ադրբեջանը հրապարակավ հայտարարում է Լեռնային Ղարաբաղի գոյությունը չունենալու մասին,
- Հայաստանի Հանրապետությունը մինչ այժմ պաշտոնապես չի ճանաչել Արցախի Հանրապետությունը՝ չխաթարելու Մինսկի խմբի համանախագահության և պատասխանատվության իրականացվող հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը,

- Այսօր Արցախի ինքնորոշման իրավունքի իրացումը և Արցախի ժողովրդի կողմից սեփական ճակատագիրը որոշելու հնարավորությունը վերջինիս անվտանգության ապահովման անհրաժեշտ և թերևս միակ իրավական երաշխիքն է,
- Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ճանաչումը գլխավոր նախապայմանն է այլ ինքնիշխան պետությունների կողմից այն ճանաչելու համար: Գիտակցելով, որ միայն մեր համախումբ գործողությունների միջոցով կարող ենք կասեցնել Արցախի վերջնական կորուստը, նախաձեռնելու ենք մի շարք գործողություններ ուղղված Հայաստանի իշխանությունների, միջազգային հանրության ու, առաջին հերթին, Մինսկի խմբի համանախագահ երկրների կողմից Արցախի անկախության ճանաչման օրակարգով հանուն Արցախի փրկության: Միացե՛ք: Կոչ ենք անում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, բարձրագույն կրթական, գիտական, մշակութային հաստատություններին, ստեղծագործական միություններին՝ դիրքորոշում հայտնել Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի անկախությունը ճանաչելու հարցի վերաբերյալ: Դիմում ենք Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության քաղաքացիներին, իշխանություններին հայրենակիցներին՝ պահանջելու Հայաստանի Հանրապետության իշխանություններից քայլեր ձեռնարկել Արցախի Հանրապետությունը ճանաչելու ուղղությամբ: Տեղեկացնում ենք նաև, որ երկուշաբթի՝ ապրիլի 4-ին, ժամը 15.00-ին մեր պահանջագիրն ենք հանձնելու Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին»:

03.04.2022

## Հայաստանում գազը թանկացավ

**Հ**այաստանում ապրիլի 1-ից գազի գինը թանկացավ: Այն հաստատված է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ:

Գազի սակագնի բարձրացման մասին 1 ամիս առաջ՝ մարտի 1-ին կայացրած որոշումն ուժի մեջ է մտնում՝ ապրիլի 1-ից:

Ըստ հաստատված սակագների՝ ՀՀ շաբաթյան սպառողների համար գազի գինը կբարձրանա 4.7 դրամով՝ 139 դրամի փոխարեն դառնալով 143.7 դրամ: Բացառություն են կազմում սոցիալապես անապահով սպառողները, որոնց համար գազի գինը չի փոխվել՝ ի հաշիվ կառավարության սուբսիդավորման: Նրանք կշարունակեն վճարել 1խմ-ի դիմաց՝ 100 դրամ սակագնով:

Որոշ արտոնություններից կօգտվեն նաև գյուղատնտեսության տնտեսվարողները, մասնավորապես՝ ջերմոցային տնտեսությունները: Նրանց համար սահմանվել են սեզոնային զեղչեր. ջերմոցման սեզոնին՝ նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը, նրանք 1000 խմ-ի դիմաց կվճարեն 233.9 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (1խմ-ի դիմաց շուրջ 114 դրամ՝ ըստ այդ պահի փոխարժեքի): Տարվա մնացած ամիսներին կվճարեն ՀՀ շաբաթյան սպառողների պես՝ 1 խմ-ի դիմաց 143.7 դրամ:

Գյուղատնտեսության ոլորտի վերամշակող՝ պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող տնտեսությունների համար գազի սակագինն ամբողջ տարին կլինի անփոփոխ՝ 1000 խմ-ի համար 233.9 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (շուրջ 114 դրամ):

Հայաստանյան այլ տնտեսությունները, այդ թվում՝ ՏԷԿ-երը ամսական մինչև 10 000 խորանարդ մետր բնական գազի համար կվճարեն բնակչության համար սահմանված սակագնով՝ 143.7 դրամ, իսկ 10 000 խորանարդ մետրից ավելի սպառած յուրաքանչյուր 1000 խմ գազի համար՝ 265.81 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (շուրջ 130 դրամ):

## Ռուսաստանը թույլատրել է հացահատիկի եւ եգիպտացորենի սերմերի արտահանումը ԵԱՏՄ երկրներ

**Ռ**ուսաստանի Դաշնության կառավարությունը որոշում է ընդունել, որով արտահանման արգելիչը հանվում են ցորենի եւ մետսինի, տարեկանի, գարու եւ սովորական եգիպտացորենի սերմերը, հաղորդում է ИИТерфакс-ը: Դրանց արտահանումը ԵԱՏՄ երկրներ թույլատրվում է գյուղատնտեսության նախարարության թույլտվության դեպքում: Բացի այդ, թույլատրվում է ճայթող հատիկների արտահանումը Ռուսաստանից (պոպկոռնի պատրաստման համար):

ԵԱՏՄ երկրներ հացահատիկի արտահանման արգելիչը մոզմվել է մարտի 15-ից եւ գործում է մինչեւ հունիսի 30-ը:

Ըստ հացահատիկի շուկայի փորձագետների՝ տարեկան 2-3 միլիոն տոննա հացահատիկ է արտահանվում ԵԱՏՄ երկրներ:

## «Հատուկ մրցանակ»՝ Կապանի պետատրոնին

**Մ**արտի 27-ին՝ թատրոնի միջազգային օրը, կայացել է «Արտավազը» ամենամյա թատերական մրցանակաբաշխությունը, որն այս տարի նվիրված էր Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի 100-ամյակին: Մրցանակներ են հանձնվել 17 անվանակարգերում: Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը կարևորել է մարզային թատրոնների զարգացումը՝ ընդգծելով, որ դրանք պետք է լինեն քաղաքային իշխանությունների ուշադրության կենտրոնում:

«Հատուկ մրցանակ»-ի է արժանացել Կապանի Ա. Շիրվանզանդեի անվան պետական դրամատիկական թատրոնը (տնօրեն՝ Տիգրան Աթայան, գեղարվեստական ղեկավար՝ Իշխան Ղարիբյան):



# ՉՊՄԿ-ն շարունակում է աշխատել սովորական ռեժիմով՝ համաձայն արտադրական պլանի

հայտասխան «Փաստ» թերթի ապրիլի 5-ի հրապարակման՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ՉՊՄԿ) աշխատանքների վերաբերյալ, ձեռնարկության մասնակի ծառայությունից հայտնում են, որ ՉՊՄԿ գործունեության վերաբերյալ բոլոր փաստերը, որոնք նշված են հրապարակման մեջ, կեղծ են:

Ստորև ներկայացնում ենք իրական փաստերը՝ համեմատած «Փաստ» թերթի բացահայտ «կեղծիքների» հետ:

1. Կեղծիք՝ նոր սեփականատիրոջ օրոք ՉՊՄԿ-ի արտադրության ցուցանիշների նվազում:

Ճշմարտություն՝ 2022 թվականի արտադրության բյուջեի պլանը, որը մշակվել է նոր բաժնետերերի կառավարման թիմի կողմից, նախատեսում է արտադրության 25% աճ՝ համեմատած 2021 թվականի փաստացի արդյունքների հետ (22 մլն.տ վերամշակում 2021թ-ի 17,6 մլն. տ համեմատ):

2. Կեղծիք՝ «կառավարչական հմտությունների բացակայություն», «կադրերի պակաս», «միևնույն անձը չի կարող արդյունավետ կառավարել, օրինակ՝ և հյուրանոցը, և գործարանը, և ֆոնդը, և այլ օբյեկտներ»:

Ճշմարտություն՝ ՉՊՄԿ-ի կառավարման թիմը կազմված է բացառապես լեռնահանքային, մետալուրգիայի և հարստացման ոլորտում մասնագիտացված կրթությամբ և աշխարհի տարբեր երկրների խոշորագույն հանքարդյունաբերական ձեռնարկություններում կառավարման փորձ ունեցող մասնագետներից, այդ թվում՝ Ռուսաստանում, Հայաստանում, Ղազախստանում, Կանադայում և այլ երկրներում, որոնք առաջատարներից են համաշխարհային հանքարդյունաբերության մեջ: ՉՊՄԿ թիմում չկան «պատահական» մարդիկ կամ մասնագետներ ոչ պրոֆիլային այլ ոլորտներից, որոնց մասին «Փաստ» հրապարակման հոդվածի հեղինակը անպատասխանատու կերպով գրում է: Նոր թիմի հիմնական ղեկավարների՝ հանքարդյունաբերության ոլորտում կուտակած գումարային փորձը ավելի քան 300 տարի է:

Ստորև ներկայացնում ենք այս թիմի հիմնական ձեռքբերումները միայն Հայաստանի ձեռնարկություններում (ԳՊՄ Գոլդ՝ Արարատի ոսկու վերամշակման ֆաբրիկա և Սոթքի հանք, Ագարակի ՊՄԿ):

■ 2008-2009 և 2014-2015 թվականների ամենադժվար ճգնաժամային ժամանակաշրջաններում, երբ գլոբալ մետաղ արտադրողները դադարեցին աշխատել և տասնյակ հազարավոր աշխատակիցներ կրճատվեցին, ԳեոՊրոմՄայնինգ-ի ակտիվները չկանգնեցրեցին իրենց գործունեությունը: Արդիականացվեցին բարոյապետ և ֆիզիկապետ հնացած արտադրական օբյեկտները:

■ Հակաճգնաժամային ներդրումային ծրագրի շրջանակներում երկու ակտիվներ՝ ԱՊՄԿ -ն և ԳՊՄ Գոլդ-ը ենթարկվել են խոշոր արդիականացման՝ ուղղված արտադրության ծախսերի կրճատմանը և ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանը: Այսպիսով, ԱՊՄԿ-ում (որը ղեկավարվում է ներկայիս ՉՊՄԿ թիմի կողմից) արտադրության ծավալը 2,7 միլիոն տոննայից/տարի ավելացել է մինչև 5 միլիոն տոննա/տարի (+185%): ԳՊՄ Գոլդ-ի արտադրության ծավալը 0 ունցիայից (ձեռնարկությունը ԳՊՄ խմբի կողմից ձեռք բերելու պահին ավելի քան 1,5 տարի պարապուրդի մատնված էր) ավելացել է մինչև 5 տոննա ոսկի տարեկան:

■ Արարատի ֆաբրիկայում ներդրվեց դժվար կորզվող սուլֆիդային հանքաքարերի վերամշակման ամենաժամանակակից, նորարարական «Ալբին» տեխնոլոգիան, որը Սոթքից Արարատ հանքաքարի տեղափոխման բարձր ծախսերի պայմաններում ձեռնարկությանը հնարավորություն տվեց շահույթ ստանալ, ավելացնել վճարումները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե և պահպանել հազարավոր աշխատատեղեր: Եթե այս տեխնոլոգիան չներդրվեր Արարատի ոսկու կորզման

ֆաբրիկայում, ապա Սոթքի հանքի շահագործումը տնտեսապես անկատարակահարմար կդառնար:

3. Կեղծիք՝ «Եվրոպական կառավարման ստանդարտներ ՉՊՄԿ-ում» նախկին սեփականատերերի օրոք:

Ճշմարտություն՝ նախկին սեփականատերերի օրոք ՉՊՄԿ-ն ուներ անարդյունավետ և ոչ թափանցիկ կառավարման համակարգ, որը թույլ էր տալիս բազմաթիվ չարաչափումներ իրականացնել: Նոր թիմը զգալի աշխատանք է կատարել ԸՆԿերության գործունեության արդյունավետությունը բարելավելու, ինչպես նաև գործունեությունը բացարձակ թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

• հայտարարվել են մրցույթներ ՉՊՄԿ-ի արտադրական գործունեության մեջ օգտագործվող բոլոր հիմնական նյութերի և ապրանքների ձեռքբերման համար (որը հնարավորություն է տվել հեռացնել անհարկի և ոչ թափանցիկ «միջնորդներին», ինչպես նաև ԸՆԿերության առևտրային գործունեությունը դարձնել առավելագույն արդյունավետ):

• Հիմնական առևտրային պայմանագրերը վերանայվել են շուկայական պայմաններով՝ գների զգալի նվազեցմամբ:

ՉՊՄԿ-ն շարունակում է աշխատել տարեկան արտադրական պլանի համաձայն: Ներկայումս ձեռնարկությունը շարունակում է իրականացնել կառավարման արդյունավետության բարձրացման ծրագիրը, որն արդեն իսկ դրական ազդեցություն է ունեցել նրա

գործունեության վրա, այդ թվում՝ պետական բյուջե վճարվող հարկերի մասով:

ԸՆԿերությունը վստահ է, որ ակտիվների կայուն շահագործումը, իրենց կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող հարկերի տարեկան աճը, վերջին 15 տարիների ընթացքում նրանց դրական ներդրումը տնտեսության և սոցիալական ոլորտի զարգացման գործում հաջողության գրավականը կլինի նաև ՉՊՄԿ-ում:

Ընդհանուր առմամբ, ՉՊՄԿ ընկերությունը հերթական անգամ լրատվամիջոցների ուշադրություն է հրավիրում իր գործունեության մասին կեղծ և չստուգված տեղեկությունների տարածման անթույլատրելիության և ընկերության ղեկավարությանը վարկաբեկելու փորձերի վրա: ՉՊՄԿ-ում կարծում են, որ նման հրապարակումները պատասխանատու են՝ ելնելով շահագրգիռ կողմերի շահերից, ովքեր կորցրել են ընկերության հաշվին ապօրինի հարստացման հնարավորությունը ՉՊՄԿ-ի նոր ղեկավար թիմի կողմից կարգուկանոնի հաստատման արդյունքում:

ՉՊՄԿ-ի ղեկավարությունը հայտարարում է, որ մոտ ապագայում համապատասխան հայց կներկայացնի «Փաստ»-ի 05.04.2022թ. հրապարակման դեմ՝ ՉՊՄԿ-ի սեփականատերերի և ղեկավարության հեղինակությունը վարկաբեկող կեղծ տեղեկություններ տարածելու համար:

## Չարգացում և սոցիալական պատասխանատվություն. ահա՛ ինչ ուղի է բռնել Չանգեզուրի պղնձամոլիբդենայինը

«Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության մասին վերջին օրերին մայրաքաղաքային մեկ-երկու պարբերականում հրապարակված նյութերն ու «մտահոգությունները» առիթ է դառնում, որ «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն ապրիլի 7-ին այցելի այդ ձեռնարկություն: Չէ՞ որ խոսքը սահմանապահ Սյունիքի ամենախոշոր ընկերության մասին է, որտեղ աշխատում է մոտ 4500 լեռնագործ. գումարած՝ սպասարկող և ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատակիցներ:

Եղանակ ընկերության տարբեր ստորաբաժանումներում, գրուցեցինք հանքագործների հետ, իսկ ավելի շատ հանդիպումներ ունեցանք հարստացուցիչ ֆաբրիկայում, որը ՉՊՄԿ առանցքային օղակն է ու որտեղ աշխատում է 700-ից ավելի հանքագործ:

Տպավորությունները, որ ստացանք, առավել քան հուսադրող էին, մանավանդ հանրապետության տնտեսական ոչ բարձր իրավիճակի համապատկերի վրա:

Նախ՝ արտադրության ընթացքը բնական և կազմակերպված հունի մեջ է՝ ղեկավարությունից մինչև հերթափոխի պետ, մինչև


շարքային հանքագործ, ինչը չի կարելի չնկատել:

Ընթացիկ տարում ենթադրվում է 22 մլն տոննա հանքաքարի արդյունահանում և մշակում: Դա մոտ 25 տոկոս աճ է՝ համեմատած նախորդ տարվա ցուցանիշին:

– Տարվա առաջին եռամսյակի արդյունքները ցույց են տալիս, որ կանխատեսումը կյանքի է կոչվում հաջողությամբ, – ասաց ՉՊՄԿ արտադրական տնօրենի տեղակալ Արտակ Դոնյանը և հավելեց. «Ընկերության առաջընթացը (հատկապես ձմռան ամիսներին) ավելի հաստատուն կլինի, եթե լուծվի տարիների խորքից եկող մի հիմնահարց՝ տեխնիկական ջրի անհրաժեշտ բանակության ապահովման հարցը, ինչը նոր ղեկավարության ուշադրության կենտրոնում է և ներառված է ներդրումային ծրագրերի մեջ»:

Այնուհետև, առկա է աշխատատեղերի դանդաղ, բայց և կայուն աճ: Այսպես՝ 2021-ի տարեվերջին 4374 աշխատատեղը դարձել է 4511: Ընդ որում՝ աճը շարունակական է լինելու (2021-ի նոյեմբերից մինչև հիմա աշխատանքի է ընդունվել մոտ 100 հոգի՝ հայոց բնակից գորագրվածներ, Արցախյան երրորդ պատերազմի մասնակիցներ):

Կարգերի հետ տարվող աշխատանքին առնչվող մի հանգամանքի մասին ևս. ըն-



թանում է աշխատողների ատեստավորում – քննություն՝ տարակարգերի վերանայման, յուրաքանչյուրին ըստ գիտելիքների և կարողությունների գնահատման նպատակով: Եվ, բնականաբար, լավագույններին սպասվում է տարակարգերի, ուրեմն և աշխատավարձերի բարձրացում:

Առաջնային նշանակություն է տրվել հանքագործների աշխատանքի պայմանների բարելավմանը՝ հարստացուցիչ ֆաբրիկայի օդափոխության համակարգի արդիակա-

նացումից մինչև սպասարկման օբյեկտների գործունեության բարելավումը (ի դեպ, վերագործակվել է մոտ երկու տարի չգործած ճաշարանը, որտեղից օրական օգտվում է 300-ից ավելի լեռնագործ):

Առաջնայնություն է տրվել նաև աշխատանքի անվտանգ պայմանների ստեղծմանը, լեռնագործների կողմից անվտանգության կանոնների խստագույն պահպանմանը: Եվ, իհարկե, աշխատանքային կարգապահությունը...







# Բռնակոթում բունտ է դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները պահանջում են պետական մարմիններից՝ հարգել Յայաստանի օրենքները

Ապրիլի 5-ի առավոտյան Միսիսի տարածաշրջանի Բռնակոթ գյուղից տեղեկություններ փոխանցեցին խմբագրության այն մասին, թե գյուղի դպրոցում անկառավարելի վիճակ է՝ գործադուլ և դասադուլ է հայտարարվել: Նման քայլերով ուսուցչական կոլեկտիվն ու աշակերտներն իրենց բողոք են հայտնում դպրոցի տնօրենի ընտրությունը երկրորդ անգամ տապալելու կապակցությամբ: Իսկ տապալման պատճառն այն է, որ մրցույթի անցկացման նպատակով հրավիրված կառավարման խորհրդի նիստին չէր ներկայացել ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը:



Ի դեպ, ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը եղել է՝ նախ՝ Միսիսի ավագ դպրոցի տնօրեն Դոնարա Ասրյանը, ապա՝ Միսիսի պետական բուհից դասախոս Գայանե Աթայանը: Ընդ որում՝ առայժմ նրանցից և ոչ մեկը հիմնավոր բացատրություն չի տվել այն մասին, թե ինչու չի մասնակցել Բռնակոթի դպրոցի կառավարման խորհրդի նիստին: Շրջանառվող խոսակցությունը, թե նրանցից մեկն անաշխատունակության թերթիկ է ներկայացրել՝ նույնպես ապացուցման կարիք ունի. ինչ հիվանդությամբ է անաշխատունակ եղել և որ բժշկել է նրան անաշխատունակության թերթիկ տվել:

յամբ դիմել են նախարարություն, որտեղից հավաստիացրել են՝ երկրորդ անգամ տեղի ունենալիք մրցույթին նախարարության ներկայացուցիչը ներկա կլինի, սակայն երկրորդ անգամ ևս չի ներկայացել:

Հինգ օր հետո նույնպես մրցույթ չի կայացել, և գործընթացը համարվել է ավարտված:

Ի դեպ, մրցույթն առաջին անգամ չկայանալուց հետո գրություն են հղել նախարարություն, որ տնօրենի ընտրության գործընթացը տապալելու միտում է նկատվում, որի մասին տեղեկացվել է նաև Սյունիքի մարզպետարանը:

Ըստ ընդունված կարգի՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում պիտի հայտարարվի նոր մրցույթ, տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթը պիտի նորից մեկնարկի...

Ինչ վերաբերում է դպրոցի մանկավարժների և աշակերտների դիմած ծայրահեղ միջոցին (գործադուլ և դասադուլ), Գագիկ Բալասանյանը նշեց. «Մարդիկ զգալով, որ նախարարության ներկայացուցիչը ներկայությունը չի ապահովում բնականոն ճանապարհով, իրենց խաբուրում են, դիմել են ծայրահեղ քայլի, որին դեմ եմ եղել ու չեմ կարողացել գործընթացը կառավարել. իրողությունն այն է, որ տնօրենի ընտրության մրցույթը տապալվել է, և ուսուցիչներն ու աշակերտները պահանջում են պետական մարմիններից՝ հարգել Յայաստանի օրենքները»:

Գործընթացին տեղյակ են նաև Սյունիքի մարզպետարանում, որն առայժմ հայեցողի դերում է, թեև հանրակրթական դպրոցների կառավարումը վստահված է պետական կառավարման այդ մարմինից: «ԱՐԴԱՍ ՕՐԲԵՆԱՆ»



## Կայացել է Մեղրիի սահմանային անցակետի արդիականացման և վերակառուցման շինարարական աշխատանքների միջազգային մրցույթը

Մեղրիի սահմանային անցակետի շինարարական աշխատանքներն իրականացնելու համար 2021թ. դեկտեմբերի 23-ին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնումների էլեկտրոնային համակարգում տեղադրվել էր մրցույթային փաթեթ և հայտարարվել էր մրցույթ: Հայտերի ընդունելության վերջնաժամկետի լրանալով պայմանավորված՝ մրցույթային ամբողջական փաթեթների ուսումնասիրման նպատակով գնահատող հանձնաժողովը կողմից պաշտոնապես բացվել են կազմակերպությունների ներկայացրած հայտերը:

Գնահատող հանձնաժողովը, որի կազմում են ՊԵԿ-ի և այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ, կուսումնասիրի տվյալ կազմակերպությունների ներկայացրած մրցույթային ամբողջական փաթեթները, նրանց նախկինում կատարած աշխատանքներն ու ներկայացրած գնային առաջարկները:

Ներկայացված հայտերի վավերականության ժամկետը 120 օր է:

Հավելենք, որ «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիրը» իրականացվում է Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև ստորագրված վարկային և դրամաշնորհային համաձայնագրի համաձայն: Ծրագրի արժեքը մոտավորապես 21 միլիոն եվրո է, շինարարական աշխատանքները տևելու են 30 ամիս:

Սահմանային անցակետը լինելու է գեր-ժամանակակից, անցակետի գործառնությունները լիարժեք ապահովելու նպատակով՝ նախատեսվում է կառուցել երկհարկանի վարչական շենք՝ 4000 քմ կառուցապատման մակերեսով՝ տակիքում 1500 քմ արևային էներգիայանով, 40000 քմ ավտոկայանատեղի, մուտքային և ելքային 5 հոսանքագիծ, ինչպես նաև հագեցած է լինելու գերժամանակակից ռենտգեն-սարքավորումներով:

Մեղրիի անցակետի արդիականացումը կարագացնի և կհեշտացնի սպասարկումը, ինչպես նաև կնպաստի «Հյուսիս-հարավ» տրանսպորտային միջանցքի ակտիվացմանը՝ խթանելով նաև տարանցիկ փոխադրումներին:

08.04.2022

## Վթար Գորիս – Կապան – Քաջարան մայրուղային գազատարում. խրոնիկա

### Գորիսից Կապան ձգվող գազատարում՝ վթար. ահաբեկչություն, թե՞ ճանապարհաշինարարի անփութություն

Գորիսից Կապան ձգվող գազատարի՝ Կատարի հատվածում այսօր առավոտյան վթար է տեղի ունեցել: Դա այն հատվածն է, որտեղով անցնում է Տանձավեր-Շուռնուխ կառուցվող ճանապարհը: Տեղի ունեցած վթարի մասին առայժմ պաշտոնական տեղեկատվություն չկա, ինչն էլ պատճառ է դարձել ամենատարբեր ասեկոսների:

Մեր աղբյուրը հերքում է տարածված տեղեկատվությունն առ այն, թե իբր Շուռնուխի մերձակայքով անցնող այդ գազատարը վնասվել է աղբյուրների ահաբեկչության հետևանքով: Նույն աղբյուրը հավաստիացնում է նաև, թե վթարը տեղի է ունեցել Տանձավեր-Շուռնուխ ճանապարհը կառուցող շինարարի անփութության և անպատասխանատվության հետևանքով:

Վերջին վարկածը, անշուշտ, մի բանի առումով խոցելի է և տարաբնույթ հարցերի տեղիք է տալիս: Օրինակ, մի՞թե առավոտվա այդ ժամին ճանապարհաշինարարներն ար-

դեն իսկ Կատարի արևմտահայաց բարձունքում էին և այլն: Միևնույն ժամանակ, որքան տեղյակ ենք, այսօր՝ օրվա վերջին, ամենայն հավանականությամբ կմեկնարկեն գազատարի վերականգնման աշխատանքները: Եվ, այդ բոլորով հանդերձ, հանրությունը սպասում է հիմնավոր պարզաբանումի՝ ի՞նչ է տեղի ունեցել Գորիս-Կապան գազատարում: 02.04.2022

### Տանձավեր-Շուռնուխ նոր կառուցվող ճանապարհին շինարարական աշխատանքներ կատարելիս վնասվել է գազատար խողովակը

Տանձավեր-Շուռնուխ նոր կառուցվող ճանապարհի 6-րդ կմ-ում շինարարական աշխատանքներ կատարելիս վնասվել է գազատար խողովակը: Այժմ իրականացվում են վերականգնողական աշխատանքները: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 02.04.2022 16:54

### Վթարավերականգնման աշխատանքների ավարտի ժամկետի

### մասին լրացուցիչ կոտեղեկացվի

«Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ ս.թ. ապրիլի 2-ին ճանապարհաշինարարական աշխատանքների ընթացքում վնասվել է Գորիս-Կապան-Քաջարան մայրուղային գազատարը՝ 13,5 կմ հատվածում: Վթարավերականգնման աշխատանքներ իրականացնելու նպատակով ժամը 11:10-ից դադարեցվել է Սյունիքի մարզի Գորիս, Կապան քաղաքների, Գորիսի և Կապանի տարածաշրջանների բնակավայրերի, ինչպես նաև Արցախի Հանրապետության գազամատակարարումը: Վթարավերականգնման աշխատանքների ավարտի ժամկետի մասին լրացուցիչ կոտեղեկացվի: 02.04.2022

### Գորիս-Կապան-Քաջարան մայրուղային գազատարի վնասված հատվածի վթարավերականգնման աշխատանքներն ավարտվել են

«Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ից տեղեկացնում է, որ ս.թ. ապրիլի 2-ին ճանապարհաշինարարական աշխատանքների ընթացքում վնասված Գորիս-Կապան-Քաջարան մայրուղային գազատարի հատվածի վթարավերականգնման աշխատանքներն ավարտվել են ապրիլի 3-ին: Իրականացվում են գազաթողարկման աշխատանքները: 03.04.2022

## Սյունիքի տարածքով անցնող միջպետական ճանապարհներ. դասեր քաղելու ժամանակը

Մարտի երկրորդ կեսին Սյունիքում տեղացած առատ ձյունն իսկական փորձություն էր տարածաշրջանի ճանապարհների համար: «Սյունյաց երկիր» ուշադրություն է դարձնում այդ օրերի գարգացումներին և պարբերաբար հանդես գալիս հրապարակումներով:

Առավել կարևորվում էր Մ-2 մայրուղուն փոխարինող Շինուխայրի խաչմերուկ-Տաթև-Աղվանի-Կապան ճանապարհը, որտեղ ծանր կացություն էր ստեղծվել հատկապես մարտի 18-ից 26-ը: Նշված մայրուղին այդ օրերին դժվար անցանելի կամ գրեթե անանցանելի էր բեռնատար ու կցորդով մեքենաների համար:

Եվ, այդուհանդերձ, մայրուղով կարողանում էին երթևեկել առանձին մարդատար մեքենաներ, ինչպես և որոշ բեռնատարներ. ըստ մեր դիտարկումների՝ մարտի 18-ից 25-ը՝ մոտ 135 բեռնատար էր կարողացել հաղթահարել դժվարությունները:

Կապան - Աղվանի - Տաթև - Շինուխայրի խաչմերուկ մայրուղին լիովին անցանելի դարձավ մարտի 26-ին: Այդ օրը, մեր խմբագրության ունեցած տեղեկությունների համաձայն, Կապանից դեպի Տաթև է շարժվել մարզկենտրոնի արևելյան մասույցներում շրջափակված մոտ 180 մեքենա, իսկ Շինուխայրի խաչմերուկից դեպի Կապան (Տաթև-

Աղվանի մայրուղով)՝ 200 մեքենա:

Հիմա զարուհուն իր իրավունքերի մեջ է: Եվ ուրեմն ժամանակն է հետադարձ հայացք ձգելու այդ օրերին և դասեր քաղելու մարտի 18-ից 26-ը Սյունիքի միջպետական ճանապարհներին ստեղծված խայտառակ վիճակից, որպեսզի ապագայում ու երբեք նման կացության մեջ այլևս չհայտնվենք:

Իհարկե, այդ օրերին իրենց գործն էին կատարում և՛ Կապանի, և՛ Գորիսի ճանապարհաշինարարները, որոնց տնօրինության ներքո է նշված մայրուղու ձևաչափի պահպանությունը: Բայց ակնատեսներն առանձնակի դրվատանքով են խոսում Ազատ

Գասպարյանի գլխավորած Մեղրու ճանապարհաշինական ընկերության մասին, որի մի ջոկատ՝ արդիական մեքենաներով ու փորձառու մասնագետներով (Հովհաննես Սարգսյանի ղեկավարությամբ) օգնության էր հասել Կապան-Տաթև մայրուղում շրջափակված մեքենաներին՝ հիմնովին փրկելով դրությունը:

Շինուխայր-Տաթև-Կապան մայրուղում ստեղծված արտակարգ իրավիճակում նվիրական աշխատանք էր կատարում ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական ջոկատի 6-րդ սպայական վաշտի 2-րդ սպայական դասակը՝ գլխավորությամբ դասակի հրամանատար, ոստիկանության փոխգնդապետ Արմեն Սարգսյանի: Առանց ճանապարհային ոստիկանների շուրջօրյա և խելամիտ գործունեության իրավիճակը կվերածվեր իսկական խառնաշփոթի:

04.04.2022

# Օ՞ ժամանակներ. ի՞նչ է կատարվում Կապանի արվեստի պետական քոլեջում

**2021** թ. հոկտեմբերի 14-ին լրացել է «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարոյան Քոչարյանի պաշտոնավարման ժամկետը:

Նոր տնօրենի թափուր տեղի համար մրցույթը նշանակվել է 2021-ի նոյեմբերին: Մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել միայն Կարոյան Քոչարյանը: Մրցույթը տեղի չի ունեցել, բանի որ ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նիստում անհրաժեշտ բնութագրում չի ապահովվել (խորհրդի կազմը 11 հոգուց է):

Մեկ շաբաթ հետո, գործող կարգի համաձայն, պետք է տեղի ունենար ՊՈԱԿ-ի խորհրդի նոր նիստ՝ մրցույթն անցկացնելու համար: Դարձյալ տեղի չի ունեցել...

Վերստին ներկա չեն եղել Սյունիքի մարզպետարանի ենթակա հիմնարկների ներկայացուցիչները... Եվ այդպես՝ վեց անգամ...

Եվ կես տարի հանրապետության ամենաշահապետ երաժշտական կրթության հաստատությունները մեկը տնօրեն չունի: Տնօրենի պարտականությունները կատարողն Աշոտ Խաչատրյանն է՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալը:

Պարզվում է՝ Կապանում չկա ուրիշ մեկը, որ ունենա հավաստագիր՝ տնօրենի թափուր տեղի մրցույթին մասնակցելու համար, ինչի



պատճառով և ձգձգվում է տնօրենի ընտրությունը: Այսինքն՝ թող լինի՝ ով կամենում է, բայց ոչ Կարոյան Քոչարյանը...

Իսկ ինչու՞ է Կարոյան Քոչարյանը հայտարարվել անցանկալի անձ՝ persona non grata:

Ըստ շրջանառվող խոսակցությունների՝ ա) Կապանի ավագանու 2021 թ. աշնանը կայացած ընտրության ժամանակ պասիվություն է ցուցաբերել իշխանական թեկնածուի քարոզարշավին, բ) քոլեջի երգեհոնային դահլիճի վերաբացմանը նվիրված միջոցառման ինչ-որ մարդկանց չեն հրավիրել, թեև այդ միջոցառման կազմակերպման հետ քոլեջը որևէ



առնչություն չի ունեցել:

Թերություններ՝ կապված քոլեջի կրթական-դաստիարակչական-ֆինանսական գործունեության առումով, Կարոյան Քոչարյանին չի վերագրվում:

Շատ կարևոր մի հանգամանք ևս. ինչպես նշեցինք՝ ՊՈԱԿ-ի խորհրդի նիստերին՝ նվիրված տնօրենի մրցույթի անցկացմանը, չեն մասնակցում միայն խորհրդի այն անդամները, ովքեր աշխատում են Սյունիքի մարզպետարանի ենթակա կառույցներում: Եվ առ այսօր հանդուրժվում է այդ խորհրդի գոյությունը, որը կես տարի շարունակ հպարտորեն

կատարում է խամաճիկային կառույցի դեր: Վեց ամիս շարունակ քոլեջի խորհրդի գործունեությունը տապալած անդամներին ոչ ոք պատասխանատվության չի կանչում: Ավելին, նրանց կարգադրված է մասնակցել խորհրդի այն նիստերին, որի օրակարգում տնօրենի ընտրության հարց չկա:

Ի դեպ, Կարոյան Քոչարյանը Սյունյաց աշխարհի նշանավոր գավակ, իսկական (և ոչ դեկորատիվ) գորահրամանատար, գեներալ-մայոր Վալերիկ Քոչարյանի եղբայրն է, ով Արցախյան երրորդ պատերազմի վերջին փուլում և հաջորդող ժամանակաշրջանում Սյունիքի սահմաններն արժանապատվորեն պաշտպանող (Կապանի տարածաշրջանում) գորամիավորման հրամանատարն էր: Ահա այսպիսի բաներ...

Ե՞րբ տեղի կունենա Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրենի ընտրության նոր մրցույթը: Պատասխանը մեկն է՝ երբ կգտնվի հավաստագիր ունեցող որևէ մեկը, և երբ լիակատար վստահություն կլինի առ այն, որ նորահաս թեկնածուն ապագա մրցույթում կստանա ձայների մեծամասնություն...

Իսկ Կարոյան Քոչարյանը, որբանով տեղեկացանք, կմասնակցի սպասվող մրցույթին:

Մնում է հրապարակված տեսնել «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի այն անդամների ցուցակը, ովքեր վեց ամիս շարունակ, խաղալիք դարձած, վարկաբեկում են մեծահամբավ ուսումնական հաստատությանը: Կապանցիները կհրավրվեն ունի իմանալու իր այդ (վայ) գավակների անուն-ազգանունները...



# Կապան համայնքի կանանց երգչախմբի առաջին բեմերը

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի նախաձեռնությամբ սկիզբ դրվեց Կապան համայնքի կանանց երգչախմբի ստեղծմանը: Ապրիլի 7-ին Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճում տեղի ունեցավ առաջին երգչախմբային համերգը՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին:

Համայնքային ենթակայության՝ արվեստի, երաժշտական դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների շուրջ 40 մասնակավարժից բաղկացած երգչախումբը համոզես եկավ բացառապես հայ կոմպոզիտորների ստեղծագործություններով: Հնչեցին Կոմիտասի, Առնո Բաբաջանյանի, Մակար Եկմայանի, Արմեն Սմբատյանի, Ռոբերտ Ամիրխանյանի, Էդգար Հովհաննիսյանի և Մարինե Ալեսի ստեղծագործությունները՝ երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար Գայանե Հարությունյանի ղեկավարությամբ:



Հանդիսատեսը շունչը պահած վայելեց յուրաքանչյուր կատարում, իսկ վերջում հոտնկայա բոլորը միասին երգեցին Գառնիկ Խաչատրյանի «Իմ Կապան» երգը, որից հետո,

չդադարող ծափոջույնների ներքո, երգչախումբը հրաժեշտ տվեց հանդիսատեսին:

**ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴՆԵՍԱՐԱՆ**

# Շուռնուխ և Որոտան բնակավայրերում անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին դրամական աջակցությունը կտրամադրվի ևս 11 ամիս

Կառավարությունն ընդունել է որոշում, որով նախատեսվում է շարունակել սոցիալական օգնության տրամադրումն Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելու պատճառով ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում հաշվառված կամ այդ հասցեում փաստացի բնակված, ՀՀ բնակության այլ վայրի հասցեում հաշվառված բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին: 2021 թ. փետրվար ամսից տրամադրվող սոցիալական օգնությունը կշարունակվի ևս 2022 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին: Հիմնավորման համաձայն, առկա իրողություններով պայմանավորված՝ Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերի մի շարք բնակիչներ կորցրել են բնակելի անշարժ գույքը: Աջակցության տրամադրման ծրագիրն ավարտվել է, և դեռևս չեն լուծվել նրանց սոցիալական, այդ թվում՝ բնակարանային խնդիրները: Ըստ այդմ՝ ամսական 68000 դրամ աջակցությունը կտրամադրվի ևս 11 ամիս:

Գործադիրը հաստատել է Արցախի Հանրապետության առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը: Ըստ այդմ՝ կսահմանվեն այդ ընտանիքների կողմից հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու դեպքում պետական աջակցության ծրագրի իրականացման ընթացակարգը և ծրագրի իրականացման առնչվող այլ հարցեր:

**07.04.2022**

**Սյունյաց երկիր**

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏ-ՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐԻ ԻՒՐԻՍԿՈՆՍՏԻԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Երկրորդ ներկայացվել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԾԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.04.2022թ.: